

## ԱՆՈՒՇ ԱՊՐԵՍՅԱՆ

### ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեկնությունը բացատրական և վերլուծական բնույթի գրվածք է: Ըստ «Նոր հայկազեան բառարան»-ի՝ մեկնել նշանակում է. «մեկնելն զմթուփին բանի. բացատրութիւն, վերլուծութիւն, լուծումն, թարգմանութիւն. իմաստ կամ միտ բանի՝ ըստ ճառին եւ ըստ խորհրդոյ»<sup>1</sup>:

Մեկնությունը հնագույն ժանր է, որը մինչև գրավոր դառնալը, բանավոր բնույթ էր կրում: Դեռևս անտիկ շրջանում մեկնվել են ինչպես ամբողջական երկեր, այնպես էլ դրանց առանձին հատվածներ: Ժանրը լայն տարածում է ստացել հելլենիզմի դարաշրջանում. Ալեքսանդրյան դարոցի ներկայացուցիչները խիստ կարևորել են այն՝ որպես մեկնողական ձև զարգացնելով նաև լուծմունքը: Նրանք մասնավորապես հիմք են դրել առասպելների այլաբանական մեկնաբանությունը (էքսեգեսիսին): Քրիստոնեության տարածումից հետո ամենից շատ մեկնվող երկ դարձավ Աստվածաշունչը. ստեղծվեց մեկնողական մի ամբողջ գրականություն: Այս շրջանում մեկնության արժեքն այնքան բարձրացավ, որ երբեմն այն բնագրից նախընտրելի էր համարվում: Մեկնությունների տարատեսակներն են. ա) բուն մեկնություն, բ) լուծմունք, գ) հարց և պատասխան, դ) ներածություն, ե) նախադրություն, զ) սկիզբն, է) պատճառք, ը) վերլուծություն, թ) նկատումն<sup>2</sup>: Մեկնություններն անհրաժեշտ էին հասկանալու, ուսուցանելու և թարգմանելու<sup>3</sup> համար:

Միջնադարյան հայ մատենագրության մեջ նույնպես մեծ տեղ են գրավում մեկնողական երկերը: Բացի Աստվածաշնչից, մեկնվել են նաև Արիստոտելի, Պորփյուրի, Դիոնիսիոս Արեոպագացու երկերը, Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականութեան»-ը և այլն:

Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկը նույնպես արժանացել է մեկնիչների տևական ուշադրությանը: «Մատեան»-ի մեկնություններ գրվել են տարբեր ժամանակներում.

<sup>1</sup> Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Բ, Եր., 1981, էջ 244, այսուհետև՝ նՔ24:

<sup>2</sup> Տե՛ս Մ. Շիրինյան, «Մեկնողական ժանրի կազմավորումը և զարգացումը Հայաստանում», Աշտանակ (Հայագիտական պարբերագիրք), Գ, Եր. 2000, էջ 36-64:

<sup>3</sup> «Մեկնել» և «թարգմանել» բառերն ունեն նույն նշանակությունը, տե՛ս Շ. Ս. Արև-ժառանգ, *Формирование философской науки в древней Армении (V-VI вв.)*, Ер., 1973, с. 172:

ա) Լուծմունքը ստեղծվել է միջնադարում. այն ունի չորս խմբագրություն: «Մատեան»-ի միջնադարյան մեկնության համառոտ օրինակը տեղ է գտել Նարեկացու երկերի Կ. Պոլսի 1700-1702-ի տպագրում և ապա վերահրատարակվել Կ. Պոլսի XVIII դարի հաջորդ բոլոր տպագիրներում (բացառություն են կազմում 1774-ի և 1790-ի հրատարակությունները)<sup>4</sup>:

բ) Հակոբ Նալբանի մեկնությունը՝ «Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացու», լույս է տեսել 1745-ին Կ. Պոլսում:

գ) Գաբրիել Ավետիքյանի մեկնությունը հրատարակվել է 1801-ին Վենետիկում: Աշխատության այդ առաջին տարբերակը չի գոհացրել նրան, և 1827-ին այն հրատարակվել է ավելի ծավալուն տեսքով, վերամշակված ու հարստացված ձևով՝ «Նարեկ աղօթից, համառոտ եւ զգուշաւոր լուծմամբ բացայայտեալ միանգամ եւ այժմ երկրորդ անգամ յաւելուածով»:

Մեկնություններն իրարից տարբերվում են մեթոդով. լինում են տառացի, այլաբանական, վերլուծական, խորհրդանշական և այլն: Միջնադարում տիրապետող էին Անտիոքի և Ալեքսանդրիայի մեկնաբանման դպրոցները: Առաջինը շեշտը դնում էր բնագրի բառացի կամ տառացի, անմիջական ընկալման և բացատրության վրա, իսկ երկրորդն էական էր համարում մեկնվող երկում ծածկաբար արտահայտվող, թաքուն խորհրդի հայտնաբերումը՝ ամեն ինչ դիտելով իբրև այլաբանություն<sup>5</sup>: Անտիոքի ուղղությունը հակված էր բնագրին ուղղակի իմաստով ըմբռնելուն, իսկ Ալեքսանդրիայի դպրոցը վերացականության, խորհրդապաշտության, դեպի ընդհանուրը գնալու միտում ուներ:

Հայ մեկնիչները կիրառել են թե՛ մեկ և թե՛ մյուս ուղղության սկզբունքները: «Մատեան»-ի մեկնություններում ներդաշնակորեն զուգակցվել են Ալեքսանդրիայի և Անտիոքի դպրոցների մեկնողական եղանակները: Մեկնիչները մերթ ձգտել են Նարեկացու խոսքերն ընկալել ուղղակի, բառացի, մերթ էլ նրա խոսքի, ոճական դարձվածքների, քնարական պատկերների մեջ տեսել խորհրդանշական, այլաբանական, փոխաբերական իմաստներ<sup>6</sup>:

Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկն այն եզակի ստեղծագործություններից է, որ ունեցել է ոչ միայն բազմաթիվ մեկնություններ, այլև աշխարհաբար թարգմանություններ: Անշուշտ, «Մատեան»-ի մեկնություններին ծանոթ են եղել նաև թարգմանիչները: Նրանք բազմիցս կարդացել են Նարեկացու «Մատեան»-ը և մեկնությունները, փորձել են հասկանալ Նարեկացու մտքի նրբությունները, կռահել, թե ինչ է մտածել սուրբ Գրիգորը՝ այս կամ այն բառը կամ նախադասությունը գրելիս:

<sup>4</sup> Տե՛ս նաև Գրիգոր Նարեկացի, *Մատեան ողբերգութեան*, աշխատասիրությամբ՝ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Եր. 1985, էջ 197-209:

<sup>5</sup> Տե՛ս Փ. Անթապյան, «Հայ մեկնաբանական գրականության տեսական նախաճիւղերի շուրջ», *Բանբեր Մատենադարանի*, 15, 1986, էջ 60-93:

<sup>6</sup> Տե՛ս Պ. Խաչատրյան, *Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը*, Ս. Էջմիածին, 1996, էջ 334-335:

Այդ թարգմանություններն ու մեկնություններն ուսումնասիրելուց հետո ակնհայտ է դառնում, որ «Մատեան»-ի աշխարհաբար թարգմանիչները՝ Մ. Գուշուկյանը, Թ. Գուշուկյանը, Գ. Տրապիզունիսին, Մ. Խերանյանը և Վ. Գևորգյանը, առանձին բառերի, կապակցությունների, նախադասությունների ու հատվածների թարգմանության ժամանակ դիմել են մեկնություններին:

Ա. Գրիգոր Նարեկացու լեզվամտածողությունն այլաբանական էր՝ բնորոշ իր դարաշրջանին: Եվ Նարեկացու երկի հանդեպ գիտական հետաքրքրությունն առաջին հերթին պայմանավորված էր հեղինակի կիրառած բառերի, արտահայտությունների խորհրդանշային իմաստների բացահայտման ձգտումով:

ա. «Ձա՛յն հառաչանաց հեծութեան ողբոց սրտից աղաղակի  
Քեզ վերընծայեմ, տեսողդ գաղտնեաց<sup>7</sup>», - գրում է Նարեկացին:

Եվ մեկնիչը բացատրում է՝ ձայները տարբեր են. դրանք հատուկ են նաև «փայտի, գոռոմոց և զջրոց<sup>8</sup>», նաև՝ «հաջիւն շան և բառաշումն անասնոց, որ ձայն ածեն և զձագսն և զընկերսն որոնեն» (325ա): Ապա մեկնիչն անդրադառնում է Նարեկացու ձայնին. «Իսկ ձայն սրբոյս է... հառաչմամբ ի խորոց սրտէ» (325ա):

Նարեկացու խոսքերը միայն առաջին հայացքից են պարզ ու հասկանալի: Յուրաբանչուր թարգմանիչ, կարդալով լուծմունքի հիշյալ տողերը, լուծմունքի շնորհիվ հասկացել կամ լուծմունքով հաստատել է բնագրի իր ուրույն ընկալումը և հետևաբար՝ թարգմանությունը: Եվ ահա այդ հատվածի տարբեր թարգմանություններ.

«Արտիս ողբաձայն հառաչանքների աղաղակն, ահա՛,  
Դեպ երկինքն ի վեր՝ քեզ եմ ընծայում, գաղտնատես՝ Աստված»<sup>9</sup>:  
«Արտիս դառնահեծ հառաչանքների  
Վայն ու ողբաձայն աղաղակները  
Վերընծայում եմ քե՛զ, ով գաղտնատես»<sup>10</sup> :

<sup>7</sup> Տե՛ս Գրիգոր Նարեկացի, *Մատեան ողբերգութեան*, աշխատասիրությամբ՝ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, գլ. Ա, էջ 246, տ. 1: «Մատեան»-ի մեկնվող տողերն այսուհետև մեջբերելու ենք այս հրատարակությունից՝ փակագծերում նշելով գլուխները, էջերը և տողերի թվահամարները:

<sup>8</sup> Երրորդ խմբագրության ՄՄ 5650, ք. 325ա: «Մատեան»-ի մեկնությունը միջնադարում լայն տարածում գտած երկ է եղել. ձեռագրերի մեծ քանակն այդ է վկայում: Լուծմունքից մեջբերումներն անում ենք նրա երրորդ խմբագրությունից (ըստ ՄՄ 5650)՝ փակագծերում մատնացույց անելով էջերը: Մյուս խմբագրություններից մեջբերելիս ձեռագրերի համարներն ու էջերը վկայակոչելու ենք առդասակում:

<sup>9</sup> Մկրտիչ Խերանյան, Գրիգոր Նարեկացի, *Մատյան ողբերգության*, Եր., 1960, էջ 1: Այսուհետև՝ հեղինակը և էջը:

<sup>10</sup> Վազգեն Գևորգյան, Գրիգոր Նարեկացի, *Մատյան ողբերգության*. Տաղեր, Եր., 1979, էջ 5: Այսուհետև՝ հեղինակը և էջը:

Եւ թարգմանիչը ոչ միայն թարգմանել է այն, ինչ գրել է Նարեկացին, այլև մտածել այնպես, ինչպես Նարեկացին և լուծմունքի հեղինակը:

բ. Նարեկացին գրում է.

«Եւ մատուցեալ եղեալ ի հուր թախծութեան անձին տոշորման

Զպտուղ ըղձից ճենճերոյ սասանեալ մտացս՝

Բուրվառու կամացս առաքել առ քեզ» (Ա, էջ 246, տ. 3-5):

Ինչպես խոնկը, կրակի վրա բոցկլտալով, ոչ միայն հաճելի բուրմունք է տարածում, այլև մաքրագործում է շրջապատը, այսպես էլ բանաստեղծը, իր հոգու տառապանքը ցանելով կրակ-աղոթքին, մաքրագործում է և՛ իր, և՛ շրջապատի հոգին: Նարեկացու ամենամեծ արժանիքներից մեկը հոգու մաքրագործումն է:

Լուծմունքը «հուր թախծութեան»-ը բացատրում է. «Որպես խոնկն ի կրակին զհոտն հանէ, նոյնպէս և անձն զղջացեալ զաղօթս ի բոլոր սրտէ» (325ա-բ):

Թարգմանիչները գրում են՝

«Հեծող սրտի մը հառաչանքի ձայներն ու ողբագին աղաղակները կը վերընծայեմ Քեզ՝ որ գաղտնիքները կը տեսնես. ու շփոթած մտքիս իղձերը զոհելով անձս տոշորող արտմութեան կրակին մէջ, կամքիս բուրվառովը Քեզ կը մատուցանեմ»<sup>11</sup>:

«Սրտիս հեծեծալից հառաչանքներուն ողբաձայն աղաղակը Քեզի կը վերընծայեմ, ո՛վ գաղտնիքները տեսնող Տէր, եւ այրուող հոգիիս թախծութեան կրակին վրայ դնելով սասանած մտքիս ճենճերոց իղձերուն պտուղը, կամքիս բուրվառովը Քեզի կը ձօնեմ զայն»<sup>12</sup>:

«ՍՐՏԻՍ ողբաձայն հեծքն ու հառաչներն,

Ո՛վ Գաղտնատես, Քեզ՝ դէպ ի բարձունքըդ ահա կ'ընծայեմ:

Եւ իմ սասանած հոգւոյս իղձերուն խոնկը ճենճերոտ,

Անձրս տոշորող թախծի կրակին վըրայ դընելով,

Կամքիս բուրվառովը Քեզ կ'ուղարկեմ»<sup>13</sup>:

«Եւ իմ սասանյալ հոգու իղձերի պտուղն այրվող՝

Անձս տոշորող թախծութեան հրի վրա դնելով՝

Կամքիս բուրվառով առաքում եմ քե՛զ» (Մ. Խերանյան, էջ 1):

«Եւ իմ սասանված մտքի ճենճերոց

<sup>11</sup> Միսաք Գոշունեան, Աշխարհաբար Նարեկ, Կ. Պոլիս, 1902, էջ 5-6: Այսուհետև՝ հեղինակը և էջը:

<sup>12</sup> Թորգոմ Եպիսկոպոս Գուշակյան, Նարեկ, Աղօթամատեան Ս. Գրիգոր Նարեկացու, Գահիրէ, 1926, էջ 1: Այսուհետև՝ հեղինակը և էջը:

<sup>13</sup> Գարեգին Եպիսկոպոս Տրապիզոնի, Նարեկ, Մատեան ողբերգութեան Ս. Գրիգոր Նարեկացիի, Պուլնոս Այրէս, 1948, էջ 2: Այսուհետև՝ հեղինակը և էջը:

Իղձերի պտուղ նվերն այս դրած

Անձս տոչորող թախծի կրակին՝

Կամքիս բուրվառով առաքում եմ քեզ» (Վ. Գևորգյան, էջ 5):

Ակնհայտ է, որ այլաբանական Ալեքսանդրյան լուծմունքը հետևողականորեն բացահայտում է «Մատեան»-ի բովանդակային ներաշխարհը: Բանաստեղծի խոսքի մեջ կարևորվում է սիմվոլը, հաստատվում այն ճշմարտությունը, թե քրիստոնեական միջնադարում մարդկային մտածողության մեջ որքան տիրական էր խորհրդանշայինը<sup>14</sup>:

Բ. Մեկնությունների հեղինակները Նարեկացու մտքերը մեկնում էին նաև իրենց իրական իմաստներով, իրենց բացատրություններում հասնում էին որոշակիություն: Տվյալ դեպքում նրանք հավատարիմ էին մնում Անտիոքի մեկնողական ձևին՝ «բանաստեղծության լեզուն» թարգմանելով «իրականության լեզվով»<sup>15</sup>:

ա. Նարեկացին գրում է. «Մի՛ զկամուրջ կենցաղոյս գրեսցես ինձ հանգստեան բաւականութիւն» (ՀԸ, էջ 563, տ. 81):

Բանաստեղծը, նկատի ունենալով ադամորդու «երկրային կյանքի» անցողիկությունը, աղերսում է երկնավորին՝ իր հանգստի համար այս աշխարհի կամուրջը (սահմանը) չհամարել բավական<sup>16</sup>:

Լուծմունքը բացատրում է՝ «Զի այս կեանքս որպէս ի կարմնջին մին դեհն ոք է և կամիցի ի վերայ գետոյն ի միւսն անցանել: Մի՛ զայս կեանս բաւական համարեր, այլ ա՛յդմ արժանացոյ» (421բ):

Թարգմանիչները գրում են.

«Մի՛ այս աշխարհի կամուրջն համարիր իմ հանգիստիս համար բաւարար» (Գ. Տրապիզոնի, էջ 196):

«Մի՛ համարիր բավ հանգստիս համար՝ կամուրջն աշխարհի» (Մ. Խերանյան, էջ 335):

«Հանգստիս համար բավականության

Սահման մի՛ հաշվիր կամուրջն աշխարհի» (Վ. Գևորգյան, էջ 471):

բ. Օրինակ՝ ԻԸ բանում Գրիգոր Նարեկացին, իր անձի դեմ մեղադրանքներ ներկայացնելով, թվարկվող մեղքերից մեկն էլ համարում է Աստծո կամքին հակառակ գործելը՝

«Զխնամո՞վն հանդիսանալ յոչ ախորժեկիսն Աստուծոյ,

Թէ՞ զբռնադատութեանն տոռամբ ձգիլն ի նոյն մոլեգնութիւն» (էջ 354, տ. 29-30):

<sup>14</sup> Տե՛ս Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Ս. Էջմիածին, 1996, էջ 341:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 336:

<sup>16</sup> Տե՛ս Պ. Խաչատրյան, Նարեկի միջնադարյան լուծմունքը, էջ 150:

լուծմունքում կարգում ենք. «Ձայն ասէ, որ խնամով մարդ որոնէ զչարն որպէս յաւուրս ջրհեղեղին: Իսկ յորժամ սովորի, այնպէս լինի, որպէս զշուն տոռնեալ և զարջ կապեալ ի սպանդ և զեղջերու նետիւ ըզլերդակողմ, որ թէպէտ և վազանէ, յորժամ նետն ի լերդն հասանի, ոչ ապրի, նոյնպէս և հարեալն պոռնկութեամբ և ամենայն կենդանի զատ ի մարդոյս, թէև կալած և կապած լինի, ոչ իմանայ թէ մեռանի, բայց արջն մերձ է բանականութեանս, իմանայ, թէ մեռանի, և ո՛չ կարէ զերծանիլ. սոսա և մեղաւորն գիտէ, որ մահ կու մեղանչէ և ազատիլ ոչ կարէ» (365ա-բ):

Մեկնիչները այն բացատրում են որպէս մարդու կողմից կյանքի հոռի բարքերին հարմարվելու, մերժելին վարքագիծ դարձնելու սովորութիւն:

Թարգմանիչները թարգմանում են.

«Աստծոյ անախորժ բաներու մասին տածած խրնամքնե՞րս,

Թէ ոչ բռնութեան շուանով տարուիլս նոյն մոլեգնութեան» (Գ. Տրապիզոնի, էջ 66):

«Աստուծո համար անախորժներին տածած խնամքնե՞րս,

Թե՞ բռնադատման պարանով ձգվելս նույն մոլեգնութեանը» (Մ. Խերանյան, էջ 119):

«Ախորժահոժար տրու՞մն Աստծո անախորժներին,

Թե՞ բռնադատման պարանով ձգվելն այդ նույն մոլութեան» (Վ. Գևորգյան, էջ 166):

Գ. Մեկնիչների համար ավելի ճշմարտապատում և իրական էր այն, ինչի մասին պատմում էր Աստվածաշունչը:

Առաջին գլխի երկրորդ հատվածում Նարեկացին գրում է.

«Ահ, գուբ եւ որոգայթ անճողոպրելի,

Ըստ մարգարէին եւ առակողին,

Տագնապաւ մեծաւ առ դուրս ինձ հասեալ,

Ձամալթն մշտնջենաւոր աստէն գծագրեն» (էջ 247, տ. 56-59):

Միջնադարյան լուծմունքը բացատրում է. «Եսայի, որ փախիցէ յահէն անկցի ի գուբն. և ելեալ ի գբոյն անկցի յորոգայթն» (328ա-բ): Սակայն մեկնիչն իր իսկ բացատրութիւնն անբավարար է համարում և տալիս է նաև մի երկրորդ մեկնութիւն՝ հատվածը կապելով առակների հետ. «Առակն Ամովսայ որ ասէ. Ձոր օրինակ փախնուցու ոք յառիժու և պատահեսցի արջու և անտի գերծեալ հանդիպի օձի: Այլև առակն Բարաղամո՞ւ յարգի սմա, որ ասէ. Այր ոմն փախուցեալ ի մի եղջերոյ և կախեալ ի միոջէ ճղոյ ի բերան ահագին խորոյ և մեծ վիշապ լեալ ի խորն և զբերանն բացեալ, զի նա անկցի և կլանիցէ: Այսպէս և մեղքն յաւուր կատարածին» (328ա-բ):

Մեկնիչը բացատրում է, որ հարկավոր է աղոթքով ապաշխարել, այլ ոչ թե փախչել կամ վախենալ մեղքից, այլապէս կարող ես ավելի մեծ մեղքերի հանդիպել:

Այս իմաստով են թարգմանել նաև թարգմանիչները.

«Մարգարէին ու առակախօսին ըսածին պէս, վիհը, սարսուռն ու վտանգն հիմակուրնէ դռներս պաշարած են, որպէս զի յաւիտենական ամօթն ու խայտառակութիւնը ճակտիս դրոշմեն» (Մ. Գոշունյան, էջ 7-8):

«Վախը, գուբը եւ անճողոպրելի որոգայթը, ըստ մարգարէին եւ առակողին, դուռս ասի են առեր մեծ աղմուկով. ու ես անոնց մշտնջենաւոր ամօթն է որ պիտի նկարեմ հոս» (Թ. Գուշունյան, էջ 2-3):

«Վախ, գուբ, որոգայթ անճողոպրելի»<sup>17</sup>,

Առակագիրին եւ մարգարէին խօսքին համաձայն,

Սաստիկ տագնապով հասած դրանքս մօտ՝

Մշտնջենաւոր ամօթըս այժմէն իսկ կը գծագրեն» (Գ. Տրապիզոնի, էջ 3):

«Վախ, գուբ, որոգայթ անճողոպրելի,-

Ըստ մարգարէի և առակողի,-

Սաստիկ տագնապով դուռս ասի առած՝

Մշտնջենական ամօթն են իրենց գծագրում արդեն» (Մ. Խերանյան, էջ 3):

«Ահ, գուբ, որոգայթ անճողոպրելի,

Ըստ մարգարէի ու առակողի

Դռանս հասած, տագնապելով ինձ,

Գծագրում եմ այստեղ իսկ ամօթն հավիտենական» (Վ. Գևորգյան, էջ 8):

«Մատեան»-ի մեկնությունները կարևորվում են նաև՝

Ա. Բառարանագրական առումով,

Բ. Թվերի և տառերի խորհրդավորության բացահայտմամբ:

Ա. 12-13-րդ դարերում դասական հայերենի բառապաշարն աստիճանաբար վերաիմաստավորվում է, սկսվում է միջին հայերենի շրջանը: Շատ բառեր արդեն չունենին այն իմաստը, ինչ V-X դարերում: «Մատեան»-ի մեկնությունները մեծ մասամբ բառարանային բնույթ ունեն, հանդիպում են.

1. Այնպիսի բառերի բացատրություններ, որոնք իմաստային երկվություն տեղիք են տվել և մեկնիչները բացատրել են բառը՝ ելնելով տվյալ համատեքստում նրա ունեցած կիրառությունից.

ա. Նարեկացին գրում է. «Պարտուցն ժխտեալ տաղանդացն՝ ճեպով մեծաւ ի տուժի» (ԻԶ, էջ 345, տ. 21):

Մեկնիչը բացատրում է՝ «ժխտեալ՝ ուրացեալ» (360ա): Իսկ նԲՀԼ-ում՝ «ժխտեալ»՝ «կեղծելով, համարձակվելով»<sup>18</sup>:

Թարգմանություններում կարգում ենք.

<sup>17</sup> «Աննողիպրելի» բառի փոխարեն՝ բնագրում «աննողոպրելի», տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ՝ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, գլ. Ա, էջ 247, տ. 56:

<sup>18</sup> նԲՀԼ, Բ. Ա, Եր., 1979, էջ 835:

«Տաղանդներու պարտքն ուրացած ճեպով մը մեծ չիրաւի,  
ենթարկըւեր իմ ապիկարս՝ անշնորհ գործովս՝ տուգանքի» (Գ. Տրապիզոնի, էջ 61):

«Դրամական պարտքն ուրանալով, ես վատս, հիրավի,  
Գործովս անարժան մատնվել եմ վաղ տույժ ու տուգանքի» (Մ. Խերանյան, էջ 109):

«Իսպառ ուրացած պարտքը տաղանդի՝  
ես ապիկարս, գործերով անարգ» (Վ. Գևորգյան, էջ 152):

բ. Մեկ այլ դեպքում Նարեկացին գրում է.

«Պատկանապէս ի խածանողականացն  
Զագիրն գեռնոց խթեալ խոցոտիմ» (ԺԹ, էջ 317, տ. 72-73):

Մեկնիչը բացատրում է՝ «պատկանապէս» նշանակում է «արժանապէս» (353բ):

Թարգմանություններում կարգում ենք.

«Ուստի եղկելիս արժանապէս է որ կը կրեմ կիզումն անզովանալի» (Գ. Տրապիզոնի, էջ 44):

«Զագիր գեռունների խայթումներից խոցոտվում եմ արդ արժանապէս» (Մ. Խերանյան, էջ 79):

2. Անձանոթ կամ սակավաձանոթ բառերի բացատրություններ.

ա) Ըստ մեկնիչի՝ **ընկլուզել** (Գ) – **ընկղմել** (335ա):

Նարեկացին գրում է.

«Եթէ անքաւելի կորստեամբ պարտեաց՝  
Յանդունդս ոք խորոց իցէ **ընկլուզել**» (էջ 258, տ. 121-122):

Թարգմանիչները գրում են.

«Թե անքավելի մեղքի կորստյամբ մեկն **ընկղմել** է խոր անդունդի մեջ» (Մ. Խերանյան, էջ 14):

«Թե անքավելի մեղանշումներից մեկը կործանված՝  
**Ընկղմված** լինի խորքն անդունդների» (Վ. Գևորգյան, էջ 25):

բ) Ըստ մեկնիչի՝ **զակատեցայ** (Ի) – **մուլեցայ** (354ա-բ):

Նարեկացին գրում է. «**Զակատեցայ** անկասելի ի պատկառելեացն գործոց» (էջ 321, տ. 49):

Թարգմանություններում հանդիպում ենք.

«**Մուլի դարձա** անկասելի կերպով ամոթալի գործերի մեջ» (Մ. Խերանյան, էջ 83):

«**Խենթի մուլեցյամբ** սիրահարվեցի  
Ամոթալի ու զագիր գործերին» (Վ. Գևորգյան, էջ 118):

գ) Ըստ մեկնիչի՝ **սակով** (Ժէ) – **չափով** (352ա):

Նարեկացին գրում է. «Նորին իսկ **սակով** սիրելն կարգեսցի» (էջ 309, տ. 103):



Թարգմանիչները թարգմանում են.

«Նոյն շափով սիրելի ալ արձանագրեմ» (Գ. Տրապիզոնի, էջ 39):

«Նոյն շափով սիրելի էլ շմոռանամ» (Մ. Խերանյան, էջ 69):

«Նոյն շափով նաև սերն հիշատակվի» (Վ. Գևորգյան, էջ 100):

Դ) Ըստ մեկնիչի՝ ապառում (ԻԳ) – խիստ վայրագ (356բ):

Նարեկացին գրում է. «Եթէ ապառում կսկծման» (էջ 333, տ. 65):

Թարգմանություններում կարդում ենք.

«Եթէ անզգամ կսկծանքի» (Գ. Տրապիզոնի, էջ 54):

«Թե անզգամ կսկծանքի» (Մ. Խերանյան, էջ 96):

«Եթե անզգամ կսկիծ ու մորմոք» (Վ. Գևորգյան, էջ 136):

Ե) Ըստ մեկնիչի՝ սեռն (ժ) – յստակ և պարզ (341ա):

Նարեկացին գրում է.

«Քանզի արդարեւ սեռն տեսութիւն,

եւ կատարեալ իմաստութիւն» (էջ 283, տ. 55-56):

Թարգմանիչները գրում են.

«Քանզի արդարև հստակ տեսողությունը, կատարյալ իմաստությունը» (Մ.

Խերանյան, էջ 41):

«Քանզի, արդարև, տեսությունն հստակ,

իմաստությունը կատարելագույն» (Վ. Գևորգյան, էջ 60):

3. Քաջածանոթ բառերի բացատրություններ, որոնք դժվար է ասել, թե ինչու են արժանացել մեկնիչների ուշադրությունը՝ կամ տվյալ տարածաշրջանում դրանց անձանոթ լինելու կամ այլ իմաստ ունենալու պատճառով:

3.1 Թարգմանիչները երբեմն հետևել են մեկնիչների բացատրությունը.

ա) Ըստ մեկնիչի՝ հանդերձի (ժԱ) – պատրաստի (342ա):

Նարեկացին գրում է. «Քանզի եւ յաստուածուստ անդուստ հանդերձի եւ այս ներգործիլ առ սոյնս» (էջ 285, տ. 36):

Թարգմանություններում կարդում ենք.

«Մեր հոգւոյն մէջ այս ներգործութիւններն

Աստուծոյ կողմէն կը պատրաստուին» (Գ. Տրապիզոնի, էջ 24):

«Զի Աստծո կողմից է պատրաստվում նաև այս, որ գործադրվի սույնի վերաբերմամբ» (Մ. Խերանյան, էջ 43):

բ) Ըստ մեկնիչի՝ վարանեալ (ժԵ) – շիւարեալ, տարակուսեալ (350ա):

Նարեկացին գրում է. «Վտարանդի բացամերժութեամբ յանբնակ վայրի վարանեալ» (էջ 300, տ. 35):

Մ. Խերանյանը թարգմանում է.

«Եվ վտարանդի, շվար ու վհատ՝ բառաչում էր խեղճ, անիմաստորեն» (էջ 59):

3.2 Սակայն այլ դեպքերում թարգմանիչները հավատարիմ են մնացել բնագրի բառին (գուցե բանաստեղծական շափը պահելու նկատառումով).

ա) Ըստ մեկնիչի՝ **անձկալի (ժԲ բան) – փափագելի (344բ)**:

Նարեկացին գրում է. «Ոչ փառք են ինձ **անձկալի**» (էջ 290, տ. 22):

Թարգմանութիւններում կարողում ենք.

«Ոչ թե փառք է ինձ համար **անձկալի**» (Մ. Խերանյան, էջ 48):

«Ոչ թե փառքն է ինձ համար **անձկալի**» (Վ. Գևորգյան, էջ 70):

բ) Ըստ մեկնիչի՝ **անշփոթ (ժԳ) – անխառն (345բ)**,

**անանջրպետ (ժԳ) – անբաժանելի (345բ)**:

Բանաստեղծը գրում է. «Նոյնագոյ բնութեամբ տիրապէս, **անշփոթ եւ անանջրպետ**» (էջ 293, տ. 17):

Թարգմանիչները գրում են.

«Նոյնագոյ բնությամբ տիրապէս, **անշփոթ և անանջրպետ**» (Մ. Խերանյան, էջ 52):

«Բնությամբ՝ նոյնգոյ, իսկությամբ՝ հատուկ,

**Անշփոթելի ու անանջրպետ**» (Վ. Գևորգյան, էջ 76):

գ) Ըստ մեկնիչի՝ **եղեռնագործ (Գ) – շարագործ<sup>19</sup>**:

Նարեկացին գրում է. «Առ բարիս եւ **եղեռնագործս**» (էջ 256, տ. 58):

Թարգմանիչները գրում են.

«Բարիների և **եղեռնագործների**» (Մ. Խերանյան, էջ 12):

«Անշար ու բարի, թե **եղեռնագործ**» (Վ. Գևորգյան, էջ 21):

դ) Ըստ մեկնիչի՝ **ապիկար (ժ) – անկար<sup>20</sup>**:

Նարեկացին գրում է. «Զի մինն զհզաւրին ձեռն իբր **ապիկար թերահաւատէ**» (էջ 281, տ. 6):

Վ. Գևորգյանը թարգմանում է.

«Քանի որ մեկն թերահավատում է հզորի ձեռքին՝

Համարելով այն **ապիկար, անզոր**» (էջ 57):

3.3 Երբեմն էլ թարգմանել են բնագրային բառին մոտ կամ հոմանիշ մեկ այլ բառով.

ա) Ըստ մեկնիչի՝ **թափառեալ (ժե) – աստ և անդ շրջեալ (350ա)**:

Նարեկացին գրում է. «Ընդ գազանականացն դիւաց եւ կոոցն վայրենութեան **թափառեալ**» (էջ 299, տ. 16):

Վ. Գևորգյանը թարգմանում է.

«**Դեգերում էր հեզ վայրի կուռքերի**

Ու դւերի հետ գազանաբարո» (էջ 85):

բ) Ըստ մեկնիչի՝ **ընձեռել (ժէ) – տալ (352ա)**:

Նարեկացին գրում է. «Որ յաճախն **ընձեռել**՝ բազումս փառաւորիս» (էջ 309, տ. 90):

<sup>19</sup> ՄՄ 5212, ք. 317ա:

<sup>20</sup> Նույն տեղում, ք. 318բ:

Թարգմանություններում կարգում ենք.

«Որքան շատ բաշխես, այնքան ավելի՛ կփառավորվես» (Մ. Խերանյան, էջ 69):

«Որքան ավելի ընծայես, այնքան կփառավորվես» (Վ. Գևորգյան, էջ 99):

գ) Ըստ մեկնիչի՝ ուրոյն (ժԳ) – որիշ (345բ):

Նարեկացին գրում է. «Տրոհեալ ի դիմաց ուրոյն գատուցմամբ» (էջ 293, տ. 15):

Մ. Խերանյանը թարգմանում է. «Հատուկ առանձնացումով տրոհված անձեր» (էջ 52):

4. Բառեր, որոնք բացատրվում են ավելի դժվարըմբռնելի կամ անծանոթ բառերով: Չնայած որ մեկնությունները ստեղծվել են նյութի ընկալումը հեշտացնելու և հասկանալի դարձնելու համար, սակայն երբեմն դրանք խրթին են և անհասկանալի.

ա) Ըստ մեկնիչի՝ տեսարանն (ԻԵ) – հայեակն, ուր նաւապետն նստի և դիտէ (358բ):

Նարեկացին գրում է. «Տեսարան գլխոյն դիտակի խոնարհեցաւ» (էջ 340, տ. 28):

Այս դեպքում թարգմանիչները թարգմանում են մի երրորդ հոմանիշ բառով.

«Գլխակողմբ բարձրացող դիտարանը կըքեցաւ» (Գ. Տրապիզոնի, էջ 58):

«Գլխակողմի բարձրադիր դիտարանը խոնարհվեց» (Մ. Խերանյան, էջ 103):

«Տապալվեց գլխի դիտարանը պերճ» (Վ. Գևորգյան, էջ 145):

Սույն օրինակը նաև ցույց է տալիս, որ թարգմանիչները երբեմն օգտվել են նախորդների մեկնաբանությունից:

բ) Ըստ մեկնիչի՝ թռչարանն (ԻԵ) – արմիոնն (358բ):

Նարեկացին գրում է. «Առագաստի թռչարան յանկարկատելի ծուէնս պատուեցաւ» (էջ 340, տ. 25):

Այսպիսի դժվարըմբռնելի բացատրության դեպքում թարգմանիչները հավատարիմ են մնում բնագրային բառին.

«Վերամբարձ կայմն իր տեղէն խըլլեցաւ թռչարանն» (Գ. Տրապիզոնի, էջ 58):

«Թռչարանն առագաստի պատուվեց ծվեններով անկարկատելի» (Մ. Խերանյան, էջ 103):

«Առագաստն ամբողջ իր թռչարանով

Պատառոտվելով դարձավ ծվեններ անկարկատելի» (Վ. Գևորգյան, էջ 145):

5. Բառեր, որոնք ունեն՝

ա) ոչ ճիշտ բացատրություններ՝ ուղերձեալ (ժԵ) – ուղիղ արձակեալ (351ա):

Մինչդեռ ըստ ՆԲՀԼ-ի՝ «ուղերձեալ» նշանակում է «ընծայաբեր լինելով համոզել, հաճել, յանկուցանել, յարել, բերել» (հ. Բ, էջ 544):

Նարեկացին գրում է.

«Եւ այդ բան՝ առ մեզ, որ միշտ ի բնութեան ունիմք

Բնաւորաբար ուղերձեալ զբիծս շարեաց

Անհամար բիւրուց նորոգ յայտնելոց» (էջ 302, տ. 93-95):

Թարգմանիչները այլևայլ կերպ են մեկնաբանում այս հատվածը.

«Մեր խառնուածքին մէջ բնական միտում մը ունինք դէպի շարն և անթիւ անհամար նոր շարիքներ կ'արտադրենք» (Մ. Գոշունյան, էջ 71):

«Բայց մեր փշածին բնութեան ամենաբոյս անդաստանին մէջ շարունակ կ'զգանք բողբոջումը բիւրաւոր անթիւ շարիքներու բիծերուն» (Թ. Գուշակյան, էջ 44):

«Մեզ, որ ի բնէ հակամետ ենք միշտ ի հայտ բերելու բյուր ու անհամար շարության բծեր» (Մ. Խերանյան, էջ 61):

«Մեզ, որ կրում ենք մեր բնության մեջ

Բնականորեն ծլարձակված բյուր,

Անթիւ-անհամար բծեր շարության» (Վ. Գևորգյան, էջ 89):

բ) տարբեր բացատրություններ՝ «հայթայթմամբ» (ԺԴ) – «հնարիւ» (347բ), «հայթայթէի» (ԺԵ) – «պատճառէի» (350բ):

ՆԲՀԼ-ում «հայթայթեմ» բացատրված է «հնարել, ճարտարել, նիւթել, ջանալ, դարման գտնել, ճարել» (հ. Բ, էջ 51):

Բանաստեղծը գրում է.

«Ոչ հայթայթմամբ խորտակեալ մարմնոյն

Արիւներանգ ներկուածով ձորձոց զգթածիդ սիրտ ճմլեցոյց» (ԺԴ, էջ 297, տ. 18):

Մինչդեռ թարգմանիչները, ի նկատի ունենալով բառի նշանակությունը բնագրում, բացատրությունը բառարանում և մեկնության մեջ, թարգմանում էին այն բառով, որն իրենց կարծիքով ամենից դիպուկն էր արտահայտում հեղինակի միտքը.

«Վիրավորված մարմինին արիւններովը ներկուած հագուստները ներկայացնելով սիրտը շկսկծեցուց զթածիդ» (Մ. Գոշունյան, էջ 64):

«Ոչ ալ՝ խորտակուած մարմինին արիւնաներկ ձորձերը ցուցնելով Գթածիդ սիրտը ճմլեցուց» (Թ. Գուշակյան, էջ 39):

«Ոչ իր ջախջախուած մարմնի արիւնով

Ներկուած ըզգեստներ քեզ ցոյց տալով կրցաւ ճմլեցնել սիրտը զըթածիդ» (Գ. Տրապիզոնի, էջ 31):

«Ոչ էլ ջախջախված մարմնի արյունով ներկված հագուստները ցույց տալով քեզ՝

Գթածիդ սիրտը ճմլեց» (Մ. Խերանյան, էջ 55):

Մեկ այլ դեպքում՝ «Թէ յանցեալսն՝ հայթայթէի» (Ժե, էջ 301, տ. 55):

Թարգմանություններում

«Եթե անցեալին մէջ եղած ըլլար՝ ինքզինքս կ'մխիթարէի (Թ. Գուշակյան, էջ 42):

«Թէ անցեալին մէջ՝ ես կ'ըստփոփուէի» (Գ. Տրապիզոնի, էջ 34):

«Թե անցյալում լիներ, կստփոփեի» (Մ. Խերանյան, էջ 60):

«Եթե լիներ նա անցյալում, գոնե

Կունենայի մի մխիթարություն» (Վ. Գևորգյան, էջ 87):

Բ. Ինչպես նշում է Հ. Թամրազյանը, այուժազորական-պլատոնական թվի փիլիսոփայությունը, Անանիա Նարեկացիով միջնորդավորված, խոր ազդեցություն է թողել Գրիգոր Նարեկացու ստեղծագործության վրա<sup>21</sup>:

Եվ ահա մեկնությունն անդրադարձել է նաև «Մատեան»-ում հանդիպող թվերի ենթիմաստների բացահայտմանը՝ թարգմանչի առաջ բացելով չնկատվող գաղտնիքներ և խորհրդավոր իմաստներ:

Թվերի միատիկ մեկնությունն ենք հանդիպում «Մատեան»-ի հետևյալ գլուխներում.

1. ԻՁ գլխում (20 թվի վերաբերյալ)՝ «Անհատական թիւ խորհրդական երկեակ տասնեկի» (էջ 345, տ. 32):

Միջնադարյան լուծմունքը «Երկեակ տասնեակ»-ն ընկալել է իբրև երկու-տասան (տասներկու) գտնելով որ դրանով ակնարկվում են 21-32-րդ տողերը, որոնց գումարը կազմում է 12՝ «Ձի ո՛չ հատանի տուն ի տանէ ի շափան: Այսինքն ի վանգան ի հեգ և ի փաղառութիւն միաշափք են: Եվ խորհրդական է թիւս: Երկուտասան՝ ի պարտուցն ժխտեալ տանէն մինչև ցայս: ԺԲ (12) տուն է ըստ անդամոց մարդոյն և ամսոց տարոյն, կենդանատեսակացն և այլոցն և թէ որոնես շատ գտանես» (360բ):

Հ. Նալբանդ տողը մեկնում է ըստ «Մատեան»-ի հին տպագիրների, որտեղ այլ ընթերցում է՝ «Երեակ տասնեկի», ինչն, ըստ նրա՝ նշանակում է տասներեք, որի տակ պետք է հասկանալ ոչ թե 21-32-րդ տողերը, որոնց գումարը տասներկու է, այլ յուրաքանչյուր տողի վանկաքանակը. «Երեակ տասնեակ՝ ո՛չ թէ գթիւ տանցն ասէ. այլ ըստ որում իւրաքանչիւր տող երեք տասան վանկ է. Ձի իւրաքանչիւր կոճատ՝ և թէք թիւ, անհատանելի է»<sup>22</sup>:

Տողի հիմնավոր մեկնությունը տվել է Գ. Ավետիքյանը: Նա «Երկեակ տասնեակ»-ը հասկանում է ոչ թե 12-ի, այլ 20-ի իմաստով՝ «Սակայն հարազատ իմաստս բառիցն երկեակ տասնեկի, իմանալի է՝ երկիցս տասն, այսինքն քսան. և յայտ առնէ զտառն Ի, յոր աւարտի ոտանաւորն, և ասի անհատական,

<sup>21</sup> Հ. Թամրազյան, Գրիգոր Նարեկացին և նորպլատոնականությունը, Եր., 2004, էջ 120-121:

<sup>22</sup> Յ. Նալբանդ, Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, Կ. Պոլիս, 1745, էջ 180:

զի մի անհատ ձայնաւոր գիր է և թիւ խորհրդակամ. զի նշանակէ զքսան, որ յայսմ բանի խորհուրդ ունի. զի վերագոյն զառակ քանքարացն յիշեաց»<sup>23</sup> :

Թարգմանիչները հետևել են Գ. Ավետիքյանի մեկնությանը և «երկեակ տասնեակ»-ը թարգմանել են քսանի նշանակությամբ.

«խորհրդաւոր թիւը, անպակասելի երկու տասնեակի» (Մ. Գոշունյան, էջ 125):

«խորհրդաւոր անհատական

միակ թիւովն երկտասնեակի» (Թ. Գուշակյան, էջ 77):

«Անհատանելի խորհրդաւոր թիւն երկեակ տասնեակի»<sup>24</sup> (Գ. Տրապիզոնի, էջ 61):

«Թիւ անհատելի և խորհրդավոր երկյակ տասնյակի» (Մ. Խերանյան, էջ 109):

«խորհրդավոր ու անհատնում թվով երկյակ տասնյակի» (Վ. Գևորգյան, էջ 153):

2. **ԿԵ** գլխում (1000 թվի վերաբերյալ) «Աւա՛ղս ինձ աստանար ի թիւս հազարաց» (էջ 505, տ. 87):

Ըստ Ավետիքյանի՝ սա պետք է լիներ «ի թիւս հազարս», բայց Նարեկացին «ի թիւս» նախդիրով հոգնակի հայցականի հետ ետադաս թվական լրացումը գործածել է սեռական հոլովով (հազարաց) «Այսինքն հազար անգամ աւաղ ինձ. և ըստ շարագրութեանն պարզի՛ աւաղ հազար թուով կամ ի հազար նուագս. զի բառն հազար՝ որ ածական է թուոյն, եղեալ է ի սեռական հոլով իբրև յատկացուցիչ»<sup>25</sup> :

Թարգմանիչները գրում են.

«Մե՛ղք ինձ, հազա՛ր աւա՛ղ» (Մ. Գոշունյան, էջ 318):

«Հազար անգամ աւա՛ղ ինձի» (Թ. Գուշակյան, էջ 213):

«Աւա՛ղ ինձ այստեղ, աւա՛ղ հազար հեղ» (Գ. Տրապիզոնի, էջ 165):

«Ավա՛ղ ինձ այստեղ բյուր-հազար անգամ» (Մ. Խերանյան, էջ 281):

«Ավա՛ղ ինձ այստեղ բյուր հազար անգամ» (Վ. Գևորգյան, էջ 395):

3. **ՂԳ** գլխում (80 և 400 թվերի վերաբերյալ) «Քանզի յուխսուներորդէ անտի գրոյ ի չորեքհարիւրն փոխաբերեալ՝ ստուգաբանարէն քննութեամբ ընդ ձիթոյն անուան նիւթ ճշմարտագրի» (էջ 634, տ. 494- 496):

<sup>23</sup> Գ. Աւետիքեան, Նարեկ աղօթից, համառօտ եւ զգուշաւոր լուծմամբք բացայայտեալ միանգամ եւ այժմ երկրորդ անգամ յաւելուածով, Վենետիկ, 1827, էջ 123:

<sup>24</sup> Գ. Տրապիզոնի «Մատենան»-ի իր՝ Կ. Պոլսի 1926-ի թարգմանության տողատակում «երկեակ տասնեակ»-ը բացատրել է ըստ Գ. Ավետիքյանի մեկնության և վկայակոչել է նրա աշխատությունը, տե՛ս Գարեգին Եպիսկոպոս Տրապիզոնի, Նարեկ. Ողբերգութիւն Ս. Գրիգոր Նարեկացիի, Կ. Պոլիս, 1926, էջ 119-120:

<sup>25</sup> Գ. Աւետիքեան, Նարեկ աղօթից, համառօտ եւ զգուշաւոր լուծմամբք..., էջ 333:

Այս հատվածում Նարեկացին մյուստի միաստիկ խորհուրդը փորձում է մեկնաբանել նաև հայոց այբուբենի տառերի թվային արժեքներով: Ձ-ի թվային արժեքն է ութսուն, ն-ինը՝ չորս հարյուր: Եթե «ձիւթ» բառի Ձ-ն փոխարինենք ն-ով «ձիւթի» փոխարեն կունենանք «նիւթ»: Նարեկացին «ձիւթ» և «ձէթ» բառերը կապում է իրար հետ և կրոնական հայեցակետից ձեթին վերագրում այլևայլ հատկանիշներ: Այս հատվածը թարգմանել է միայն Մ. Գոշունյանը, ահա այն. «Որովհետեւ 80 նշանակող (Ձ) գիրը երբ 400ի փոխենք (ն) ստոյգ բացատրութեամբ ձիւթը (ձէթին ձիւթ ըսած է հոս) նիւթ կ'ըլլայ» (էջ 498):

Մեկնիչների ուշադրությանն են արժանացել նաև այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են «Մատեան»-ի կառուցվածքին, արտահայտության եղանակին ու ոճին, ինչպես նաև տաղաչափական առանձնահատկություններին, որոնք էլ մեծ կարևորություն են ներկայացնում թարգմանչի և մեզ համար, քանի որ միջ-նադարն այդ հարցերում չափազանց սակավախոս է:

Այսպիսով, Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի մեկնություններն ունեցել են տարբեր դրսևորումներ. մեկնիչները Նարեկացու մտքերը բացատրել են մերթ Մուրբ Գրքով, մերթ սեփական գիտելիքներով, մերթ բանաստեղծի հուշումներով՝ ընթերցողին ցույց տալով նարեկացիական մտքի հարստությունը՝ փորձելով Նարեկացուն Նարեկացիով հասկանալ և բացատրել:

Նարեկացու երկի եզակիությունը անտարբեր չի թողել նաև թարգմանիչներին. տարբեր ժամանակներում հայտնվել են նոր թարգմանիչներ, որոնք փորձել են յուրովի հասկանալ և ներկայացնել «Մատեան»-ը, անգամ կրկին անդրադառնալով նույն գործին, ինչպես Գ. Տրապիզոնին, ով չգոհանալով իր առաջին թարգմանությամբ (Կ. Պոլիս, 1926), տարիներ անց ներկայացրել է մի նոր տարբերակ, որը նախորդ արձակ թարգմանության վերանայված ու բարեփոխված հրատարակությունն է, չափածո տողատումով և գրաբար բնագրի հանդիպադրումով (Բուենոս Այրես, 1948):

Այս ամենը վկայում է Նարեկացու մեծության և, անկախ ժամանակներից, նրան նոր ձևով ընկալելու և մատուցելու անսպառ ցանկության մասին. դրա շնորհիվ մենք այսօր ունենք մեկնություններ և աշխարհաբար թարգմանություններ, որոնց հեղինակները ձգտել են հնարավորինս մոտենալ իրական «Մատեան»-ին, հասկանալ Նարեկացու խոսքի իրական իմաստը:

### Ануш Апресян

#### Толкования “Книги скорбных песнопений” Григора Нарекаци и ее переводы на современный армянский язык

В средневековой армянской литературе важное место принадлежат толкованиям. “Книга скорбных песнопений” Григора Нарекаци одно из тех уникальных произведений, которое удостоилось де-

тального внимания толкователей. Толкования “Книги” писались в разное время: средневековое толкование (в четырех редакциях), комментарии А. Наляна (1745) и Г. Аветикяна (1801, 1827). Они различны: мысли Нарекаци толкуются либо посредством Священного Писания, либо благодаря собственному пониманию или же подсказкам поэта, являя читателю богатство мысли автора, пытаясь объяснить Нарекаци через его же творчество.

“Книга скорбных песнопений” много раз переводилась на современный армянский язык. Переводчики были знакомы с толкованиями “Книги” и обращались к ним при переводе отдельных слов, словосочетаний, предложений и отрывков. В статье приводится ряд интересных примеров такого влияния комментариев на переводы.

#### **Anush Apresian** **Commentaries on Grigor Narekatsi’s “Book of Lamentations” and its Modern Armenian Translations**

Commentaries had great importance in medieval Armenian literature. Grigor Narekatsi’s “Book of Lamentations” is a writing that underwent detailed interpretation. Commentaries on the “Book” were written in different times: the medieval commentary (in four versions), commentaries of H. Nalyan (1745) and G. Avetikyan (1801, 1827). They are different: the commentators explained the thoughts of Narekatsi with the help of the Bible, according to their own knowledge or by the prompts of the author, trying to show the richness of his thinking and to explain “Narekatsi through Narekatsi himself”.

Grigor Narekatsi’s “Book of Lamentations” has several modern Armenian translations. Translators were familiar with the commentaries on the “Book” and used them while translating specific words, word-combinations, sentences and passages. Several interesting examples of the influence of the commentaries on the translations are listed in the article.